ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ <<ԻՐԻՆԴԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ>> ՊՈԱԿ

2.08.2023թ.

«Ավթոնա» ՍՊԸ տնօրեն **Դ.Գաբրիելյանին**

Ծ Ա Ն Ու Ց Ում
Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին

Արագածոտնի մարզի**«Իրինդի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ**-ի և **«Ավթոնա» ՍՊԸ** ի միջև **«22» նոյեմբերի 2022**թ. Կնքված պայմանագրով N **ՀՀԱՄ-ԻՐԻՆԴ-ՄԴ-ԳՀԱՇՁԲ -22/02** պետության կարիքների համար կապալային աշխատանքների կատարման պետական գնման պայմանագրի կատարման վերջնաժամկետն է **ա/թ. հունվարի 6**-ը:

Սակայն պայմանագրով սահմանված ժամկետում ստանձնած պարտավորությունները չեն կատարվել**«Ավթոնա» ՍՊԸ-ի** կողմից:

Հիմք ընդունելով վերոգրյալը և Պայմանագրի 8.11 կետը՝ Արագածոտնի մարզի **«Իրինդի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ**-ը միակողմանի լուծում է Արագածոտնի մարզի**«Իրինդի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ**-ի և **«Ավթոնա» ՍՊԸ** ի միջև «22» նոյեմբերի 2022թ. կնքված N ՀՀԱՄ-ԻՐԻՆԴ-ՄԴ-ԳՀԱՇՁԲ -22/02 պայմանագիրը՝ պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով կիրառելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» Կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները:

Միաժամանակ տեղեկացնում ենք, որ պայմանագիրը կհամարվի միակողմանի լուծված՝ սույն ծանուցումը պատվիրատուի կողմից պաշտոնական տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրվանից:

«Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա ենթակետով նախատեսված հիմքերն ի հայտգալու դեպքում, պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Ընդ որում սույն կետում նշված որոշումը պատվիրատուի ղեկավարը կայացնում է գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելու կամ կնքված պայմանագրի վերաբերյալ հայտարարությունը հրապարակելու կամ պայմանագիրը միակողմանի լուծելու մասին հայտարարությունը(ծանուցումը) հրապարակելու օրվան հաջորդող տասներորդ օրը: Որոշումը կայացվելուն հաջորդող օրը այն գրավոր տրամադրվում է լիազորված մարմնին և մասնակցին: Լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում որոշումն ստանալուն հաջորդող քառասուներորդ օրվան հաջորդող հինգերորդ օրը, իսկ որոշումն ստանալուն հաջորդող քառասուներորդ օրվա դրությամբ մասնակցի կողմից որոշման բողոքարկման վերաբերյալ հարուցված և չավարտված դատական գործի առկայության դեպքում՝ տվյալ դատական գործով եզրափակիչ դատական ակտն ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող հինգերորդ օրը, եթե դատական քննության արդյունքով որոշման կատարման հնարավորությունը չի վերացել:

Ընդ որում, եթե՝

-սույն կետով նախատեսված՝ լիազորված մարմնին որոշումը ներկայացվելու վերջնաժամկետը լրանալու օրվա դրությամբ մասնակիցը կամ պայմանագիրը կնքած անձը

վճարել է հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարը, ապա պատվիրատուն տվյալ մասնակցին ցուցակում ներառելու պատճառաբանված որոշումը չի ներկայացնում լիազորված մարմին:

-Այսպիսով, **«Ավթոնա» ՍՊԸ**ին տրվում է **10 /տասը/ օրացույցային օր**՝ տուժանքներով սահմանված որակավորման՝**309204 /երեք հարյուր ինը հազար երկու հարյուր չորս/** դրամ և պայմանագրի **206136 /երկու հարյուր վեց հազար հարյուր երեսունվեց/** դրամ ապահովումների գումարները Արագածոտնի մարզի **«Իրինդի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ**-ի Կենտրոնական գանձապետարանի Հ/Հ **900468000410** հաշվեհամարին փոխանցելու նպատակով:

-Սահմանված ժամկետում գումարները չվճարելու դեպքում, «Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա ենթակետի համաձայն, **«Ավթոնա» ՍՊԸ**-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պատճառաբանված որոշումը Պատվիրատուն կներկայացնի լիազորված մարմին, իսկ Կապալառուի կողմից պայմանագիր կնքելու նպատակով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի ձևով, կներկայացվեն Կապալառուի բանկ՝ նշված գումարները գանձելու նպատակով:

ՏԵՍՐԵՆ

Վ. Խոջաբեկյան